ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/73

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն

Հայկ Մարտիրոսյանի (պետական գրանցման վկայական՝ N 03Ա957041),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.03.2021թ. թիվ 26/26-1/4165-2021 գրությամբ «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 16.03.2021թ. թիվ ՊՆ/02/1325-2021 գրության հիման վրա 22.03.2021թ. թիվ 26/26-1/4165-2021 գրությամբ նախաձեռնել է «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/73 ընթացակարգի շրջանակներում 02.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ընթացակարգին, որի շրջանակներում Ընկերությանը ներկայացվել է հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման ծանուցում: Ընկերության կողմից կատարվել է համապատասխան շտկում և ուղարկվել է պատվիրատուին, սակայն հետագայում պարզվել է, որ լիազորագիրը՝ Հրայր Մարտիրոսյանի կողմից փաստաթղթերը թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ, պատվիրատուն չի ստացել, որից հետո Ընկերությունը փորձել է պարզել և նկատել է, որ Ընկերության էլեկտրոնային փոստով ուղարկվել է միայն ապրանքի ամբողջական նկարագիրը, այսինքն՝ լիազորագիրը Ընկերության համակարգչի տեխնիկական խնդիրներով պայմանավորված չի ուղարկվել»:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.03.2021թ. թիվ ՊՆ/02/1325-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի օժանդակ մասերի և վերանորոգման պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Հրայր Մարտիրոսյանի կողմից, սակայն վերջինիս նման իրավասություն ունենալու վերաբերյալ լիազորագիրը բացակայում է, ինչպես նաև հավելված 1.1-ում 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում

նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ էր հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենար գնահատելու Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի՝ պահանջվող լիազորագիրը չի ներկայացրել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/73 ընթացակարգի շրջանակներում 02.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/73 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/73 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի օժանդակ մասերի և վերանորոգման պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինս արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի՝ պահանջվող լիազորագիրը չի ներկայացրել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2021թ. թիվ 26/26-1/4165-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.03.2021թ. թիվ ՊՆ/02/1186-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/73 ընթացակարգի շրջանակներում «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ի հայտնած դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. **խախտել է** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.7-րդ ենթակետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի օժանդակ մասերի և վերանորոգման պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Հրայր Մարտիրոսյանի կողմից, սակայն վերջինիս նման իրավասություն ունենալու վերաբերյալ լիազորագիրը բացակայում է, ինչպես նաև հավելված 1.1-ում 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է

ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ էր հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենար գնահատելու Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինս արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի՝ պահանջվող լիազորագիրը չի ներկայացրել:

Եվ այսպես, Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.7-րդ ենթակետով սահմանվում է, որ սույն ***հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): <u>Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկել է մասնակի՝ չի ներկայացրել Հրայր Մարտիրոսյանի կողմից Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ փաստաթուղթը, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Ինչ վերաբերում է Ընկերության՝ ՍՑ-ՆԳ-2021/73 ծածկագրով ընթացակարգի քննության ընթացքում 02.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնած դիրքորոշմանը, այն է՝ «*Ընկերության էլեկտրոնային փոստով ուղարկվել է միայն ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ լիազորագիրը Ընկերության համակարգչի տեխնիկական խնդիրներով պայմանավորված չի ուղարկվել*», ապա արձանագրում եմ, որ վերջինիս կողմից վերաբերելի ապացույց չի ներկայացվել, որով կփաստվեր դիրքորոշմամբ հայտնածը: Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է ՍՑ-ՆԳ-2021/73 ընթացակարգի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.03.2021թ. թիվ 26/26-1/4165-2021 գրությամբ «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**